

Ծանուցում մամուլի համար

**Կորյուն Խաչատուրյանը «Հայաստանի մանուկներ»  
բարեգործական հիմնադրամի նոր ղեկավարն է**

ԵՐԵՎԱՆ, 15.01.2019 թ. - Կորյուն Խաչատուրյանը նշանակվել է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) գործադիր տնօրեն:

Նա գլխավորելու է Հիմնադրամի երևանյան գրասենյակի թիմի աշխատանքը՝ ապահովելով կազմակերպության առանցքային ծրագրերի իրագործումը՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նախաձեռնությունը և ավանդական ծրագրերը կրթության, առողջապահության, սոցիալական և տնտեսական ոլորտներում:

*«Մեծ ոգևորությամբ եմ միանում ՔՈԱՖ-ին այս կարևոր ժամանակահատվածում: Նախորդ 15 տարիների ընթացքում Հայաստանի գյուղական համայնքներում կյանքի որակի բարձրացման ուղղությամբ մեծ գործ է արվել: Հայաստանի երեխաները լավագույնին են արժանի, և մենք հենց այս գործին ենք կոչված՝ միշտ ձգտելով կատարելության»,-* ասում է Կորյուն Խաչատուրյանը:

Նորանշանակ գործադիր տնօրենը անմիջապես հաշվետու է ՔՈԱՖ-ի հիմնադիր, դոկտոր **Կարո Արմենին:** Դ-ր Արմենը կրկին կմիանա «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հայաստանյան հոգաբարձուների խորհրդին:

*«Մենք վստահ ենք, որ տեխնոլոգիայի տիրապետման ու նորարարության շնորհիվ կառուցվելու է ուժեղ համայնք, գրանցվելու է տնտեսական աճ, և առաջընթաց է ապահովվելու մեր շահառու համայնքներում իրագործվող ծրագրերի համար,-* նշում է ՔՈԱՖ-ի հիմնադիր **Կարո Արմենը:**- *Հետամուտ լինելով 2018 թվականի գալա-դրամահավաքին հանգանակված 4 միլիոն ԱՄՆ դոլարին՝ մենք բազմաթիվ անելիքներ ունենք ու հաշվետու ենք դրա համար: Ուրախ եմ, որ Կորյունը՝ իր անցած ճանապարհով ու հաջողություններով, միանում է ՔՈԱՖ-ի մեր թիմին և օգնելու է իրականացնել հաջորդ սերնդին զորավիզ լինելու հավակնոտ առաքելությունը»:*

\* \* \*

*«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (COAF) նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը՝ հատկապես կենտրոնանալով երեխաների և երիտասարդների կարողությունների զարգացման վրա: ՔՈԱՖ-ի ուշադրության ծիրում կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական զարգացման ծրագրերն են: Հիմնադրամի ծրագրերն սկսել են իրագործվել 2004 թվականին մեկ գյուղից և ընդլայնվել դեպի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 գյուղական համայնքներ:*

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին և հասանելի է լինելու մարզի շուրջ 150,000 բնակիչներին: